BLOOM AWARD

BLOOM AWARD

Bloom Award-ի ուղեցույց 2026

2026 թ. նոյեմբերի 19

https://granshan.com/hy/awards/bloom/guidelines

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞ւմ է ուղղված մրցույթը

Մասնակցության համար ընդունելի ժամանակահատված

Գրային խմբեր և մեդիա կատեգորիաներ

- Գրային խմբեր
- Մեդիա կատեգորիաներ

Գնահատման չափանիշներ

Ժյուրին

- Լավագույններից լավագույն 50-ի ժյուրի

Ժյուրիի աշխատանքի ընթացքը և մրցանակները

Ի՞նչ կարող եք շահել

- Աջակցող տառաձևարանների ընտրության մրցանակ
- Ժյուրիի աշխատանքի երեք փուլերը

Ի՞նչ են ստանում հաղթողները

Կատեգորիաներ և վճարներ

Ներկայացման ժամանակացույցը և ժյուրիի աշխատանքի ընթացքը

- Աշխատանքների ներկայացման փուլ
- Աշխատանքների ներկայացումից հետո

GRANSHAN աջակցող տառաձևարանների ակումբ

Աշխատանքների ներկայացման հարթակ և ձևաչափեր՝ ըստ մեդիա կատեգորիաների

1. Խմբագրական և հրատարակչական դիզայն
2. Պաստառներ (տպագիր և թվային)
3. Փաթեթավորման դիզայն
4. Թվային մեդիա և միջերեսի դիզայն
5. Շարժապատկերային գրաֆիկա և անիմացիա
6. Միջավայրի և փորձառության դիզայն
7. Արշավներ
8. Տեսողական ինքնություն և բրենդավորում
9. Փորձարարական, չհրատարակված և գեղագրական աշխատանքներ

Մասնակցության կանոններ և ընդհանուր արժեքներ

- Մասնակցության պայմանների և հեղինակային իրավունքի հայտարարություն

Սիրելի գրեր, սիրելի աշխարհներ

Լատինականից դուրս գրային համակարգերով հաղորդակցական դիզայնի առաջին համաշխարհային մրցանակը, որի գնահատումն իրականացնում են ձեր գրային համակարգին հարազատ միջավայրի մասնագետներ

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք:

Շատ ուրախ ենք, որ հետաքրքրված եք լատինականից դուրս գրային համակարգերով հաղորդակցական դիզայնի աշխարհի առաջին մրցույթին աշխատանք ներկայացնելու հնարավորությամբ՝ **GRANSHAN Bloom Award – առաջին թողարկում՝ 2026:**

Ստորև մանրամասն ներկայացրել ենք աշխատանքների ներկայացման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Այս ուղեցույցով ցանկանում ենք հստակ և պարզ բացատրել, թե ինչ է ներառում մրցույթին աշխատանք ներկայացնելը և ինչպես է ընթանում գնահատումը: Մեր նպատակն է ձեզ տրամադրել անհրաժեշտ ուղղորդումն ու պատկերացումները, որպեսզի ձեր աշխատանքը ներկայացնեք լավագույնս և հնարավորություն տաք ձեր ստեղծարարությանը լիովին ծաղկելու:

Այս բոլոր տեղեկությունները կգտնեք նաև ներբեռնումների բաժնի PDF փաստաթղթում: (https://granshan.com/files/bloom-guidelines-2026-v4.pdf)

Խնդրում ենք հետևել ներկայացվելիք բաղադրիչների վերաբերյալ մանրամասն ցուցումներին, որոնք հանգամանորեն բացատրված են այստեղ: Կարող եք նաև այցելել մեր հաճախ տրվող հարցերի բաժինը (https://granshan.com/1st-granshan-bloom-communication-design-competition-20252026/bloom-faq):

Անհամբեր սպասում ենք ձեր աշխատանքներին:

GRANSHAN-ի թիմ

Ո՞ւմ է ուղղված մրցույթը

GRANSHAN Bloom Award-ը հրավիրում է՝

- Դիզայներներին, տառային ձևավորման մասնագետներին և ստեղծագործական տնօրեններին

- Ստուդիաներին, գործակալություններին և կազմակերպությունների ներքին դիզայնի թիմերին
- Հրատարակիչներին, մշակութային հաստատություններին և հասարակական կազմակերպություններին
- Ուսանողներին և նորավարտներին
- Լատինականից դուրս գրային համակարգերի միջավայրում աշխատող բրենդներին և կազմակերպություններին

Եթե ձեր աշխատանքում տառային ձևավորումը կապում է մշակույթները, պատմություններ է պատմում և ձևավորում ինքնություն, այս մրցույթը ձեզ համար է:

Մասնակցության համար ընդունելի ժամանակահատված

Ներկայացման ենթակա են **2023 թ. հունվարից մինչև 2026 թ. դեկտեմբեր** ստեղծված կամ առաջին անգամ հրապարակված աշխատանքները: Հրապարակման կամ ավարտի ամսաթիվը պետք է լինի այս ժամանակահատվածում: Մինչև 2023 թ. հունվարը ստեղծված աշխատանքները չեն կարող մասնակցել՝ անկախ նրանից, թե արդյոք դրանք շարունակում են ակտիվորեն օգտագործվել կամ տարածվել:

Գրային խմբեր և մեդիա կատեգորիաներ

GRANSHAN Bloom Award-ը արժևորում է տառային ձևավորման վարպետությունը տարբեր մշակույթներում, գրային համակարգերում և դիզայնի ոլորտներում: Դրա հիմքում ժյուրիի յուրահատուկ կառուցվածքն է, որը համատեղում է **մշակութային խորությունը** և **մասնագիտական վարպետությունը.** յուրաքանչյուր ներկայացված աշխատանք ուսումնասիրում են մասնագետներ, որոնք հասկանում են թե՛ դրանում գործածված գրային համակարգը, թե՛ այն մեդիան, որում այն ներկայացված է:

Գրային խմբեր

Մեր գրային խմբերն արտացոլում են աշխարհի գրային համակարգերի մշակութային և տառային հարստությունը՝ արաբական ու չինական գրերից մինչև հունական, ճապոնական, կորեական և այլ գրեր: Յուրաքանչյուր գրային խումբ ներկայացնում են տվյալ գրային համակարգին հարազատ միջավայրի կամ բնագիր գրի 12 – 15 մասնագետներ, որոնք

խորապես հասկանում են ձեր աշխատանքի լեզվական և մշակութային համատեքստը: Յուրաքանչյուր գրային խմբում ընդգրկված են մեդիա կատեգորիաների մասնագետներ՝ խմբագրական դիզայնից մինչև շարժապատկերային գրաֆիկա, միջավայրի դիզայն և այլ ոլորտներ:

Որոշ մեդիա կատեգորիաներ միասին գնահատում են նույն մասնագետները. օրինակ՝ գրքի դիզայնի մասնագետը կարող է նաև պաստառներ գնահատել: Այսպիսով, ձեր նախագիծը դիտարկվում է թե՛ նեղ մասնագիտական գիտելիքի, թե՛ տառային վարպետության ընդհանրական ընկալման տեսանկյունից:

2026 թ. թողարկման համար GRANSHAN Bloom Award-ը կենտրոնանում է հետևյալ **8 գրային խմբերի** վրա՝

- Արաբական ծագման գրեր (արաբերեն, պարսկերեն, քրդերեն, ուրդու)
- Հայերեն
- Չինարեն (ավանդական կամ պարզեցված)
- Հունարեն
- Հարավասիական գրեր (գուրմուխի, դևանագարի, գուջարաթի, բենգալի, թելուգու, կաննադա, մալայալամ, թամիլ, սինհալա)
- Ճապոներեն
- Կորեերեն
- Հարավարևելյան ասիական գրեր (թայերեն, բիրմայերեն, լաոսերեն, խմերերեն)

Հաջորդ թողարկումներում այս գրային խմբերը կընդլայնվեն՝ ներառելով այլ գրային համակարգեր, օրինակ՝ կիրիլյան, վրացական, եբրայական և համաաֆրիկյան գրեր:

Մեդիա կատեգորիաներ

Տառային այս բազմազանությանը զուգահեռ մրցույթն ընդգրկում է **9 մեդիա կատեգորիա**՝ յուրաքանչյուրն իր հարթակն առաջարկելով տառային բացառիկ ստեղծարարության համար: Յուրաքանչյուր նախագիծ իր ընտրած մեդիայի շրջանակում գնահատում են տվյալ ոլորտի մասնագետները:

Աշխատանքները կարող են ներկայացվել մի քանի մեդիա կատեգորիաներում, սակայն յուրաքանչյուր կատեգորիայի համար անհրաժեշտ է առանձին ներկայացում և վճարում (միակ բացառությունը մինչև 2026 թ. հոկտեմբերի 27-ը աշխատանք ներկայացրած մասնակիցներին տրամադրվող մեկ լրացուցիչ անվճար աշխատանքն է): Յուրաքանչյուր մրցութային աշխատանք ցանկության դեպքում կարելի է նշել որպես ուսանողական կամ պրակտիկայի շրջանակում իրականացված նախագիծ:

1 – Խմբագրական և հրատարակչական դիզայն

Բացառիկ դիզայներական աշխատանքներ հրատարակչության ոլորտում, որտեղ բովանդակությունն ու տառային ձևավորումը միավորվում են՝ տպագիր և թվային մեդիայում ընթերցանությունը դարձնելով գրավիչ:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Գրքի դիզայն (օրինակ՝ գեղարվեստական և ոչ գեղարվեստական գրականություն, արվեստի գրքեր, կատալոգներ)
- Ամսագրերի և թերթերի դիզայն (տպագիր կամ թվային)
- Տառային ձևավորմամբ հրատարակչական շարքեր (հեղինակային սյունակներ, գրական շարքեր, մասերով հրապարակվող էսսեներ)
- Անկախ հրատարակչություն (զիներ, ինքնահրատարակված գրքեր, տեղեկագրեր, փորձարարական ձևաչափեր)

2 – Պաստառներ (տպագիր և թվային)

Պաստառների բացառիկ դիզայն մշակութային, առևտրային կամ սոցիալական համատեքստերում՝ շեշտադրելով ազդեցիկ ուղերձը, տառային հստակությունն ու տեսողական ներգործությունը:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Առանձին պաստառներ
- Պաստառների շարքեր
- Մեծաչափ պաստառներ (օրինակ՝ 18/1 գովազդային վահանակներ, քաղաքային արտաքին գովազդի ձևաչափեր)
- Թվային պաստառներ (էկրանային ցուցադրություններ հանրային կամ առևտրային տարածքներում)

3 – Փաթեթավորման դիզայն

Նորարար և գործառնական փաթեթավորում, որն ընդգծում է բրենդի ինքնությունը և խթանում օգտատիրոջ ներգրավվածությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում տառային մանրամասներին և ձևի միջոցով տեսողական պատմություն հաղորդելուն:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Առանձին ապրանքի փաթեթավորում
- Ապրանքային գծեր և շարքեր
- Տառային ձևավորմամբ փաթեթավորում (դիզայն, որտեղ տառաձևը հիմնական տեսողական տարրն է)

4 – Թվային մեդիա և միջերեսի դիզայն

Էկրանային դիզայնի ստեղծագործական լուծումներ, որոնք թվային միջավայրում նոր մակարդակի են հասցնում փոխազդեցությունն ու տառային ձևավորման որակը:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Կայքեր և օգտատիրոջ միջերեսներ
- Բջջային հավելվածներ
- Թվային հրատարակություններ / Էլեկտրոնային գրքեր / Ինտերակտիվ գրքեր
- Միկրոկայքեր կամ թվային պատմություններ ներկայացնելու հարթակներ

5 – Շարժապատկերային գրաֆիկա և անիմացիա

Ժամանակի ընթացքում զարգացող դիզայներական աշխատանքներ, որոնք տառային ձևավորման և տեսողական շարժման միջոցով պատմություններ են պատմում, գաղափարներ արտահայտում կամ ուշադրություն ուղղորդում:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Տառային անիմացիաներ
- Տիտրերի հաջորդականություններ
- Շարժապատկերային գրաֆիկա՝ արշավների, երաժշտության, կրթության կամ բրենդավորման համար
- Շարժվող տառաձևերի փորձարկումներ
- Փոփոխական տառատեսակների յուրահատուկ կիրառություններ (օրինակ՝ հաստության, լայնության կամ օպտիկական չափի դինամիկ փոփոխությամբ)

6 – Միջավայրի և փորձառության դիզայն

Տարածական հաղորդակցության նախագծեր, որոնք տառաձևերի, պատկերների և կառուցվածքի միջոցով փորձառություններ են ձևավորում ֆիզիկական կամ հիբրիդային միջավայրում:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Ցուցահանդեսների և տոնավաճառների դիզայն
- Կողմնորոշման համակարգեր և ցուցանակներ
- Տարածական տառային ձևավորում (ինստալյացիաներ, տառաձևերը ճարտարապետության մեջ, թվային և ֆիզիկական տարրերի համադրություններ)

7 – Արշավներ

Հաղորդակցության համապարփակ ռազմավարություններ՝ մեկ կամ մի քանի ալիքներով, արտահայտիչ տառային ձևավորմամբ և տեսողական պատմությամբ:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Տպագիր արշավներ (հրատարակչական, գովազդային, հանրային հաղորդակցության)
- Տարբեր մեդիաներ համադրող արշավներ (տպագիր, թվային, ֆիզիկական)
- Հանրային շահին ծառայող հաղորդակցություն (սոցիալական, քաղաքական, մշակութային)

8 – Տեսողական ինքնություն և բրենդավորում

Բրենդի ամբողջական ինքնության դիզայն, որը տառային ձևավորման և տեսողական լեզվի միջոցով արտահայտում է նրա բնույթը, արժեքներն ու համատեքստը:

Ընդունելի ձևաչափերն են՝

- Կորպորատիվ դիզայնի համակարգեր / Տեսողական ինքնություններ
- Լոգոտիպի դիզայն
- Տառաձևերի վրա հիմնված բրենդավորում (ինքնություններ, որոնց հիմքում գլխավորապես տառաձևերն են)

9 – Փորձարարական, չհրատարակված և գեղագրական աշխատանքներ

Հարթակ անկախ և հայեցակարգային աշխատանքների համար, որոնք բացահայտում են տառային ձևավորման նոր մոտեցումներ, գործիքներ ու մշակութային պատմություններ – հատկապես լատինականից դուրս գրային համակարգերի համատեքստում: Ընդունելի ձևաչափերն են՝

- Սեփական նախաձեռնությամբ նախագծեր
- Հետազոտության վրա հիմնված կամ հայեցակարգային նախատիպեր
- Նախնական գաղափարներ / Ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ
- Գեղագրական աշխատանքներ և ուսումնասիրություններ
- Դեռ չհրատարակված կամ չիրականացված աշխատանքներ
- Տառային ձևավորման որոնումներ

Գնահատման չափանիշներ

GRANSHAN Bloom Award-ի յուրաքանչյուր մրցութային աշխատանք գնահատվում է ուշադրությամբ ու հետաքրքրասիրությամբ՝ մասնագետների կողմից, որոնք արժևորում են և՛ համարձակ գաղափարները, և՛ անթերի իրականացումը: Մեր չափանիշներն արտացոլում են գաղափարի, վարպետության և մշակութային նշանակության հավասարակշռությունը՝ ապահովելով, որ ակնառու աշխատանքն արժևորվի իր բոլոր կողմերով:

- **Հայեցակարգ և նորարարություն** – Գաղափարներ, որոնք զարմացնում են, ոգեշնչում և առաջ մղում ոլորտը:
- **Հաղորդակցություն և հստակություն** – Դիզայն, որը խոսում է հստակ և նպատակային:
- **Տեսողական և գեղագիտական որակ** – Գեղեցկություն, հավասարակշռություն և մանրամասներ՝ կատարյալ ներդաշնակությամբ:
- **Տառային ձևավորման գերազանցություն** – Տառաձևերի և դրանք ներառող գրային համակարգերի վարպետ իմացություն:
- **Վարպետություն և իրականացում** – Անթերի մշակում՝ յուրաքանչյուր տարրի նպատակային տեղադրմամբ:
- **Օգտագործման հարմարություն և գործունակություն** – Ձևն ու գործառույթը միասին աշխատում են անխափան:
- **Մշակութային և սոցիալական նշանակություն** – Դիզայն, որն արձագանքում է իր ժամանակին, վայրին և լսարանին:

Թեև բոլոր չափանիշները կարևոր են, երեքը մեր առաքելության հիմքում են և ժյուրիի գնահատման մեջ կունենան կրկնակի կշիռ՝ «Հայեցակարգ և նորարարություն», «Տառային ձևավորման գերազանցություն» և «Մշակութային և սոցիալական նշանակություն»: Միասին դրանք կազմում են GRANSHAN Bloom Award-ի կենդանի եռյակը՝ համարձակ գաղափարի կայծը, գրին վարպետորեն տիրապետելը յուրաքանչյուր կորում ու ներտառային բացատում, և իր մշակութային հողում արմատավորված դիզայնի խոր արձագանքը: Այստեղ տեսլականը հանդիպում է վարպետությանը, և երկուսն էլ իրենց իրական իմաստն են գտնում այն պատմություններում, խորհրդանիշներում ու համայնքներում, որոնց ծառայում են:

Ժյուրին

GRANSHAN Bloom Award-ի ժյուրին միավորում է մշակութային խոր իմացությունն ու մասնագիտական լայն հայացքը՝ ապահովելով յուրաքանչյուր ներկայացված աշխատանքի ընկալումն իր տառային, մշակութային և դիզայներական ամբողջական համատեքստում:

Գրային խմբերի ղեկավարներ
Յուրաքանչյուր գրային խումբ գլխավորում է գրային խմբի ղեկավարը՝ համապատասխան գրային համակարգի ոլորտում միջազգային ճանաչում ունեցող և մեծ հարգանք վայելող մասնագետ: Որպես տարբեր մեդիաների ընդհանուր իմացություն ունեցող մասնագետ՝ գրային խմբի ղեկավարն ապահովում է, որ յուրաքանչյուր ներկայացված աշխատանք դիտարկվի մշակութային ճշգրտությամբ և տառային ձևավորման իմացությամբ:

Մեդիայի մասնագետներ
Գրային խմբի ղեկավարից բացի, յուրաքանչյուր գրային խմբում ընդգրկված են մեդիայի 3 – 5 մասնագետներ, որոնց հմտություններն ընդգրկում են մեր ինը մեդիա կատեգորիաների

ամբողջ շրջանակը: Հստակության համար այդ կատեգորիաները միավորված են չորս մասնագիտական խմբերում՝

- Խմբագրական և հրատարակչական դիզայն, Պաստառներ, Փաթեթավորման դիզայն
- Թվային մեդիա և միջերեսի դիզայն, Շարժապատկերային գրաֆիկա և անիմացիա
- Միջավայրի և փորձառության դիզայն, Փորձարարական, չհրատարակված և գեղագրական աշխատանքներ
- Արշավներ, Տեսողական ինքնություն և բրենդավորում

Յուրաքանչյուր գրային խմբի ժյուրիում ներկայացված են բոլոր մասնագիտական խմբերը, որպեսզի նախագիծը միշտ ուսումնասիրեն թե՛ համապատասխան մեդիայի, թե՛ տվյալ գրային համակարգի մասնագետները:

Այս երկակի ուշադրությունը՝ գրային համակարգի տիրապետմանն ու մեդիայի իմացությանը, ապահովում է ձեր աշխատանքի գնահատումն այն ճշգրտությամբ, արդարությամբ և խորությամբ, որին այն արժանի է:

Լավագույններից լավագույն 50-ի ժյուրի

Վերջնական փուլում Bloom Award-ի բոլոր հաղթողներին դիտարկում է **Լավագույններից լավագույն 50-ի ժյուրին**, որն ընտրում է մինչև 50 լավագույններից լավագույն աշխատանք: Այս ժյուրին միավորում է համաշխարհային դիզայնի ամենաճանաչված անուններից մի քանիսին՝ արևմտյան ավանդույթի ներկայացուցիչներին և լատինականից դուրս գրային համակարգերի աշխարհի առաջատար գործիչներին: Այս համադրությունը միտումնավոր է. այն ընդգրկում է հաղորդակցական դիզայնի ամբողջ շրջանակը՝ միաժամանակ ուշադրության կենտրոնում պահելով աշխարհի՝ լատինական այբուբենից դուրս գրային համակարգերը և ընդգծելով դրանց համաշխարհային մշակութային նշանակությունը: Իրենց մասնակցությունն արդեն հաստատածների թվում է Stefan Sagmeister-ը:

Ժյուրիի անդամների անունները կհայտարարվեն աստիճանաբար. առաջին անունները կհրապարակվեն 2026 թ. սկզբին:

Ժյուրիի աշխատանքի ընթացքը և մրցանակները

GRANSHAN Bloom Award-ի ժյուրիի աշխատանքն ընթանում է երեք փուլով՝ յուրաքանչյուր քայլում արժևորելով գերազանցությունը և ապահովելով, որ յուրաքանչյուր հաղթող նախագիծ ստանա բովանդակալից, տեսանելի ճանաչում:

Բոլոր մրցութային աշխատանքները ժյուրիին ներկայացվում են անանուն: Յուրաքանչյուր նախագծին կցվում են հայտի ձևաթղթում տրված նկարագրական տեքստերը (առանց ինքնությունը բացահայտող տվյալների) և, առկայության դեպքում, անիմացիոն կամ շարժապատկերային ներկայացումներ: Այդպես ժյուրիի անդամները կարող են գնահատել ոչ միայն դիզայնի տեսողական որակը, այլև այն, թե ինչպես է այն գործում իր համար նախատեսված դինամիկ համատեքստում:

Ի՞նչ կարող եք շահել

Յուրաքանչյուր հաղթող աշխատանք ստանում է **Bloom Award**՝ GRANSHAN Bloom Award-ի տարբերանշանը: Բոլոր մրցանակներն ունեն հավասար կարգավիճակ. ոսկե, արծաթե կամ բրոնզե աստիճաններ չկան:

Այս հաղթողներից **Լավագույններից լավագույն 50-ի ժյուրին** ընտրում է մինչև **50 լավագույններից լավագույն աշխատանք**՝ մրցույթի բարձրագույն պարգևը:

Բացի այդ, գործընկեր կազմակերպությունների և հաստատությունների հետ համագործակցությամբ նախատեսում ենք հանձնել մի շարք **Հատուկ մրցանակներ**: Դրանք կարող են արժևորել նախագծեր, որոնք, օրինակ, ուսումնասիրում են փորձարարական գործիքներ և զարգացող տեխնոլոգիաներ, խորապես անդրադառնում են տառային մշակույթին ու ժառանգությանը կամ ցույց են տալիս սոցիալական ազդեցություն ստեղծելու դիզայնի կարողությունը: Հատուկ մրցանակների ճշգրիտ ցանկը կհայտարարվի գործընկերությունների հաստատումից հետո:

Աջակցող տառաձևարանների ընտրության մրցանակ

Ժյուրիի հիմնական մրցանակներից բացի, մեր աջակցող տառաձևարաններից յուրաքանչյուրը կարող է շնորհել **հատուկ ճանաչում**՝ Տառաձևարանի ընտրություն: Ժյուրիի պաշտոնական որոշումներից հետո յուրաքանչյուր տառաձևարան կարող է ընտրել մրցանակակիր նախագծերից մեկը, որտեղ իր տառատեսակներն օգտագործվել են առանձնահատուկ ստեղծարարությամբ և ազդեցությամբ:

Այս նախագծերը **կլուսաբանվեն երկու անգամ**՝ նախ տառաձևարանի սեփական կապուղիներում, ապա GRANSHAN-ի համաշխարհային հարթակներում՝ ընտրված աշխատանքներին միջազգային դիզայներական համայնքում ապահովելով **լրացուցիչ տեսանելիություն, վստահություն և առաջխաղացում**:

Մասնակիցների համար սա **հաղթելու ևս մեկ հնարավորություն է. Bloom Award-ի շրջանակում շնորհվող Bloom Award-ից** բացի, ձեր նախագիծը կարող է ընտրվել աշխարհով մեկ գործող առաջատար տառաձևարանի կողմից որպես իր լավագույն օրինակ՝ ձեր

աշխատանքն անմիջականորեն կապելով այսօրվա ամենաազդեցիկ անկախ տառատեսակների հրատարակիչներից մի քանիսի հետ:

Ժյուրիի աշխատանքի երեք փուլերը

Փուլ 1 – Մասնագիտական ժյուրիի գնահատում
Մասնագիտական ժյուրիի գնահատման ընթացքում ժյուրիի ավելի քան 100 անդամներ՝ առանձին մեդիա կատեգորիաների և գրային խմբերի մասնագետներ, ուսումնասիրում են բոլոր ներկայացված աշխատանքները: Ժյուրիի յուրաքանչյուր անդամ ինքնուրույն գնահատում է 1-ից (ցածր) 5 (բարձր) միավորով: 3.0-ից ցածր միավոր ստացած աշխատանքները չեն անցնում հաջորդ փուլ, եթե ժյուրիի որևէ անդամ հիմնավոր փաստարկներով դրանք կրկին չի առաջադրում:

Փուլ 2 – Bloom Award-ի շնորհման որոշումներ
3.0 կամ ավելի բարձր միջին միավոր ունեցող բոլոր ներկայացված աշխատանքներն անցնում են հաջորդ փուլ: Մասնագիտական ժյուրիներն առցանց նիստերի ընթացքում խորությամբ քննարկում են այդ աշխատանքները: Քննարկումից հետո ժյուրիի անդամները Bloom Award շնորհելու հարցով քվեարկում են «այո» կամ «ոչ»՝

- Ժյուրիի 3 անդամի դեպքում անհրաժեշտ է առնվազն 2 «այո» ձայն
- Ժյուրիի 4 անդամի դեպքում անհրաժեշտ է առնվազն 3 «այո» ձայն
- Ժյուրիի 5 անդամի դեպքում անհրաժեշտ է առնվազն 4 «այո» ձայն

Bloom Award ստացած յուրաքանչյուր աշխատանք արժանանում է վկայագրի՝ հաստատելով տարվա հաղթողներից մեկը լինելու հանգամանքը:

Փուլ 3 – Լավագույններից լավագույնը
Bloom Award-ի բոլոր հաղթողներից **Լավագույններից լավագույն 50-ի ժյուրին** ընտրում է մինչև **50 լավագույններից լավագույն աշխատանք**՝ մրցույթի բարձրագույն պարգևը: Այս բարձրակարգ ժյուրիում ընդգրկված են համաշխարհային դիզայնի ամենաճանաչված անուններից մի քանիսը:

«Լավագույններից լավագույնը» ճանաչվելը նշանակում է, որ ձեր աշխատանքը տպավորել է ոչ միայն ձեր ոլորտի մասնագետներին, այլև մեր ժամանակի ամենահեռատես դիզայներներից մի քանիսին:

Ի՞նչ են ստանում հաղթողները

GRANSHAN Bloom Award շահելը նշանակում է ավելին, քան պարգև ստանալը: Դա նշանակում է, որ ձեր աշխատանքը դառնում է տառային ձևավորման և դիզայնի շուրջ համաշխարհային զրույցի մաս՝ տեսանելի, գնահատված և հիշվող: Ճանաչման յուրաքանչյուր ձև կոչված է ձեր նախագծին ապահովելու տեսանելիություն, համատեքստ և տևական ներկայություն:

Bloom Award
Յուրաքանչյուր մրցանակակիր աշխատանք ստանում է **GRANSHAN Bloom Award**՝ նվաճման նշան, որը հաղթողները կարող են օգտագործել իրենց հաջողությունը ներկայացնելու համար: Վկայագրի հետ միասին հաղթողներին տրամադրվում են պաշտոնական նյութեր, որոնք օգնում են հայտնել ստացած ճանաչման մասին, օրինակ՝ սոցիալական ցանցերում, պորտֆոլիոներում կամ մամուլին ուղղված հաղորդագրություններում:

Համաշխարհային ճանաչում
Հաղթող նախագծերը **լուսաբանվում են GRANSHAN-ի և մեր մեդիա գործընկերների կապուղիներում**՝ հասնելով միջազգային դիզայներական համայնքին և դրանից դուրս: Մասնագիտական ցանցերում ձեր աշխատանքը տեսանելի է դառնում ամբողջ աշխարհի դիզայներներին, պատվիրատուներին, դասավանդողներին և մշակութային հաստատություններին:

Առցանց ցուցահանդես և արխիվ
Բոլոր հաղթող մրցութային աշխատանքները ներկայացվում են granshan.com կայքի **համադրված առցանց ցուցադրությունում**: Առաջին ցուցադրությունից հետո յուրաքանչյուր նախագիծ դառնում է **GRANSHAN-ի մշտական առցանց արխիվի** մաս՝ որպես հանրությանը հասանելի տևական աղբյուր՝ տեղեկանալու, ուսումնասիրելու և ոգեշնչվելու համար:

Ճանաչում տպագիր նյութերում
Յուրաքանչյուր հաղթող կընդգրկվի **GRANSHAN-ի պաշտոնական տպագիր նյութերում**: «Լավագույններից լավագույնը» ճանաչվածներին այս նյութերն ուղարկվում են անմիջապես. մյուս բոլոր հաղթողները կարող են դրանք ստանալ հարցմամբ՝ հոգալով առաքման ծախսերը, կամ վերցնել GRANSHAN-ի ցուցահանդեսների և համաժողովների ժամանակ: Այս տպագիր նյութերը կատալոգից ավելին են՝ տառային վարպետության շոշափելի վկայություն:

Մրցանակների առաջին շնորհում և հիմնական ցուցահանդես
«Լավագույններից լավագույնը» ճանաչված աշխատանքները հայտարարվում են **GRANSHAN Bloom Award-ի մրցանակաբաշխության** ժամանակ, որը տառային ձևավորմանը, մշակույթին և դիզայնին նվիրված համաժողովի մաս է: Միջոցառմանը զուգահեռ համադրված ցուցահանդեսը լսարանին հնարավորություն է տալիս զգալու յուրաքանչյուր ընտրված աշխատանքի լիարժեք ազդեցությունը:

Տարածաշրջանային և գործընկերային ցուցահանդեսներ
Մրցանակների առաջին շնորհումից և հիմնական ցուցահանդեսից հետո ընտրված աշխատանքները կներկայացվեն GRANSHAN-ի միջազգային գործընկերների ցանցի միջոցով՝ ներառյալ տարածաշրջանային ցուցահանդեսներ, որոնք կարող են զուգահեռ ընթանալ աշխարհի տարբեր վայրերում:

Բոլոր մասնակիցները աշխատանքը ներկայացնելիս պետք է տրամադրեն առնվազն մեկ տպագրության պատրաստ պատկեր կամ վերարտադրություն՝ ցուցահանդեսներում և հրատարակություններում ընդգրկվելու համար:

Կատեգորիաներ և վճարներ

GRANSHAN Bloom Award-ը ստեղծվել է համայնքի կողմից՝ համայնքի համար:

Մեր նպատակն է մասնակցությունը հնարավոր դարձնել դիզայներների և կազմակերպությունների համար՝ անկախ նրանց գործունեության ծավալից ու տնտեսական պայմաններից, միաժամանակ ապահովելով մրցույթը կազմակերպելու, ժյուրիի աշխատանքն իրականացնելու և հաղթողներին արժանիորեն մեծարելու հնարավորությունը:

Գործընթացի արդարությունն ապահովելու համար առաջարկում ենք ինքնագնահատման վրա հիմնված վճարի երեք սանդղակ՝

- **Ցածր եկամտով անձինք / Ուսանողներ / Պրակտիկանտներ / Ֆրիլանսերներ** – սահմանափակ միջոցներ ունեցող անհատների, ուսանողների և անկախ դիզայներների համար:
- **Փոքր և միջին ընկերություններ** – փոքր թիմերով և համեստ շրջանառությամբ ստուդիաների ու գործակալությունների համար:
- **Խոշոր ընկերություններ** – կայացած գործակալությունների, ընկերությունների կամ հաստատությունների համար, որոնք ունեն կազմակերպական ավելի մեծ հնարավորություններ:

Վստահում ենք, որ յուրաքանչյուր մասնակից կընտրի իր վիճակին առավել համապատասխան կատեգորիան: Վճարները մնում են նույնը մինչև աշխատանքների ներկայացման ավարտը՝ առանց փուլերի և թանկացումների, իսկ Արշավներ և Տեսողական ինքնություն և բրենդավորում կատեգորիաների վճարը մյուս կատեգորիաների վճարի կրկնապատիկն է: Մասնակցության վճարը միակ պարտադիր ծախսն է. հաղթողների համար վճարներ կամ թաքնված վճարներ չկան:

Վճարը կիրառվում է յուրաքանչյուր ներկայացված աշխատանքի և յուրաքանչյուր մեդիա կատեգորիայի համար. եթե նախագիծը ներկայացվում է մեկից ավելի կատեգորիաներում, յուրաքանչյուր մրցութային աշխատանք գնահատվում և վճարվում է առանձին: Միակ

բացառությունը մինչև 2026 թ. հոկտեմբերի 27-ը աշխատանք ներկայացրած մասնակիցներին տրամադրվող մեկ լրացուցիչ անվճար աշխատանքն է:

Արդեն աշխատանք ներկայացրե՞լ եք: Ձեր մրցութային աշխատանքը մնում է այնպիսին, ինչպիսին կա: Մինչև 2026 թ. հոկտեմբերի 27-ը ներկայացված աշխատանքները կարող են անվճար վերանայվել կամ լրացվել մինչև 2026 թ. դեկտեմբերի 22-ը: Քանի որ վճարներն այժմ նվազեցված են, դուք նաև ստանում եք մեկ լրացուցիչ աշխատանք անվճար ներկայացնելու հնարավորություն. մենք անձամբ կկապվենք ձեզ հետ:

Կատեգորիա	Ցածր եկամտով անձինք, ուսանողներ և ֆրիլանսերներ	Փոքր և միջին ընկերություններ	Խոշոր ընկերություններ
1. Խմբագրական և հրատարակչական դիզայն	15€	45€	125€
2. Պաստառներ (տպագիր և թվային)	15€	45€	125€
3. Փաթեթավորման դիզայն	15€	45€	125€
4. Թվային մեդիա և միջերեսի դիզայն	15€	45€	125€
5. Շարժապատկերային գրաֆիկա և անիմացիա	15€	45€	125€
6. Միջավայրի և փորձառության դիզայն	15€	45€	125€
7. Արշավներ	30€	90€	250€
8. Տեսողական ինքնություն և բրենդավորում	30€	90€	250€
9. Փորձարարական, չհրատարակված և գեղագրական աշխատանքներ	15€	45€	125€

Ներկայացման ժամանակացույցը և ժյուրիի աշխատանքի ընթացքը

GRANSHAN Bloom Award-ն ընթանում է հստակ փուլերով՝ ձեզ բավարար ժամանակ տրամադրելով ձեր լավագույն աշխատանքը պատրաստելու համար և ապահովելով արդար ու հանգամանալի գնահատում:

Աշխատանքների ներկայացման փուլ

- **Աշխատանքների ընդունման սկիզբը՝ 2025 թ. դեկտեմբեր**
- **2026 թ. հոկտեմբերի 27-ից մասնակցության նվազեցված վճարներ բոլորի համար, որոնք կմնան նույնը մինչև աշխատանքների ներկայացման ավարտը՝ առանց փուլերի և թանկացումների**
- **Աշխատանքների ներկայացման ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 22 (Երկրի ցանկացած վայրում, AoE). վերջնական ժամկետ՝ առանց հետագա երկարաձգման**

Աշխատանքների ներկայացումից հետո

- **Վարչական աշխատանքներ՝** 2026 թ. դեկտեմբեր. բոլոր մրցութային աշխատանքները պատրաստվում են ժյուրիի ուսումնասիրությանը:
- **Գնահատում և վերջնական ընտրություն՝** 2027 թ. հունվար – ապրիլ. գրային խմբերը և դրանց մասնագիտական ժյուրիները հունվարին անհատապես գնահատում են մրցութային աշխատանքները, փետրվարին հաջորդում են վարողի մասնակցությամբ քննարկումները, իսկ մարտին՝ որոշումները. Լավագույններից լավագույն 50-ի ժյուրին իր ընտրությունը կատարում է ապրիլին:
- **Հաղթողների հայտարարում՝** 2027 թ. գարուն. հաղթողները կհայտարարվեն GRANSHAN Conference & Ceremony-ի բեմից (վայրն ու ամսաթիվը կհայտարարվեն ավելի ուշ):

Խոստում, որը պահում ենք. նախկին վաղ մասնակցության շրջանում՝ մինչև 2026 թ. մարտի 17-ը, ներկայացված և հետագայում մրցանակի արժանացած աշխատանքները կստանան հատուկ գնահատանքի նշան: Վաղ մասնակցության այս հաղթողներն առաջինը կլուսաբանվեն GRANSHAN-ի հետմրցութային հաղորդակցություններում՝ արդյունքները աշխարհին հայտարարելիս իրենց աշխատանքների տեսանելիության համար ստանալով մեկնարկային առավելություն:

GRANSHAN աջակցող տառաձևարանների ակումբ

Միջին չափի մի խումբ տառաձևարաններ միավորել են ուժերը՝ օգնելու մշակել և մեկնարկել GRANSHAN Bloom Award-ը՝ ներդրում ունենալով թե՛ ֆինանսապես, թե՛ ռազմավարական առումով: Նրանք աջակցել են մրցույթի ընդհանուր հայեցակարգին և այժմ ակտիվորեն ընդլայնում են դրա հասանելիությունն իրենց սեփական կապուղիների միջոցով:

Յուրաքանչյուր աջակցող տառաձևարան (https://granshan.com/supporting-foundries) նաև հատուկ ճանաչում կշնորհի՝ ընտրելով իր տառատեսակներն օգտագործող մեկ հաղթող նախագիծ և այն ներկայացնելով իր հարթակների հատուկ ցուցադրություններում, GRANSHAN-ի միջոցով ու սոցիալական ցանցերում:

Նրանց ներգրավվածությունը զուտ աջակցող բնույթ ունի. նրանք չեն մասնակցում ժյուրիի աշխատանքին: Նրանց դերն է ամրապնդել մրցույթի հիմքը, աջակցել հաղորդակցությանը և մեծարել հաղթողներին ամբողջ աշխարհում: Այս հատուկ կապը տեսանելի կլինի **Աջակցող տառաձևարանի ընտրության ցուցադրության** մեջ՝ յուրահատուկ մրցանակ, որը լուսաբանում է տառաձևարանի տառատեսակների բացառիկ կիրառությամբ աշխատանքները:

Աշխատանքների ներկայացման հարթակ և ձևաչափեր՝ ըստ մեդիա կատեգորիաների

GRANSHAN Bloom Award-ի բոլոր մրցութային աշխատանքները ներկայացվում են մեր հատուկ **աշխատանքների ներկայացման հարթակով**, որը մշակվել է մրցութային հարթակների մասնագետի հետ համագործակցությամբ: Համակարգը թույլ է տալիս վերբեռնել աշխատանքը պահանջվող թվային ձևաչափերով և քայլ առ քայլ ուղղորդում է ձեզ: Ձեր մրցութային աշխատանքը պահպանվում է ընթացքում, ուստի կարող եք այն վերանայել և թարմացնել այնքան անգամ, որքան ցանկանում եք՝ մինչև վճարելը. կարող եք սկսել վաղ և ընթացքում կատարելագործել: Մասնակցության վճարի վճարումն է համարվում աշխատանքի ներկայացումը. վճարելուց հետո այն կողպվում է և այլևս չի կարող խմբագրվել կամ չեղարկվել: Մինչև 2026 թ. հոկտեմբերի 27-ը ներկայացված աշխատանքները կարող են անվճար վերանայվել կամ լրացվել մինչև 2026 թ. դեկտեմբերի 22-ը:

Ֆիզիկական կամ տպագիր աշխատանքների համար անհրաժեշտ է բարձրորակ թվային փաստագրում՝ լուսանկարներ, սկանավորված պատկերներ կամ տեսագրություններ, որոնք հստակ ներկայացնում են աշխատանքը: Օրինակ՝ ամսագիրը կարելի է վերբեռնել և՛ որպես

թերթվող PDF, և՛ որպես էջերը թերթող կարճ տեսանյութ՝ կցելով նաև առանձին էջերի բարձր լուծաչափով պատկերներ՝ տառային ձևավորման մանրամասները ցույց տալու համար:

Աշխատանքների ներկայացման հարթակը հավաքում է ոչ միայն ձեր նախագծի ֆայլերը, այլև ժյուրիի գնահատման և, մրցանակ ստանալու դեպքում, մեր **առցանց ցուցահանդեսում**, տպագիր կատալոգում ու ֆիզիկական ցուցադրություններում անմիջապես օգտագործելու համար անհրաժեշտ տեղեկությունները: Ձեզնից կպահանջվի տրամադրել՝

- Մասնակցի և կապի տվյալներ
- Պատկերներ (jpg, png), PDF փաստաթղթեր, տեսանյութեր
- Նախագծի հակիրճ նկարագրություն
- Բոլոր ներդրում ունեցողների անուններն ու դերերը՝ յուրաքանչյուրի դիմանկարով և կարճ կենսագրությամբ

Բոլոր նյութերը պետք է պատրաստվեն այնպես, որ աշխատանքի մրցանակ ստանալու դեպքում հնարավոր լինի դրանք առանց լրացուցիչ խմբագրման օգտագործել թվային պրոյեկցիայի, մեծաչափ տպագրության կամ առցանց ներկայացման համար: Ժյուրին ևս նույն հարթակում կդիտարկի և կգնահատի ձեր աշխատանքը: Նկատի ունեցեք՝ մրցութային աշխատանքը ժյուրիին կփոխանցվի միայն մասնակցության վճարը վճարելուց հետո:

Արդար գնահատում ապահովելու համար բոլոր նախագծերը ժյուրիին ներկայացվում են անանուն: Աշխատանքին կցվում են հայտի ձևաթղթում տրված նկարագրական տեքստերը, սակայն դրանք չպետք է պարունակեն մասնակցի ինքնությունը բացահայտող որևէ տեղեկություն: Հնարավորության դեպքում ներկայացված աշխատանքները պետք է ներառեն անիմացիոն կամ շարժապատկերային նյութեր՝ տեսանյութ, GIF կամ համարժեք ձևաչափ, որպեսզի ժյուրին կարողանա աշխատանքը դիտել նախատեսված դինամիկ ձևով:

1. Խմբագրական և հրատարակչական դիզայն

Փուլ 1 – Թվային ներկայացում

- Բարձր լուծաչափով PDF (300 dpi, առավելագույնը՝ 20 MB), որն ամբողջությամբ ցույց է տալիս հրատարակությունը՝ ներառյալ կազմը, ընտրված երկէջ բացվածքները և տառային հիմնական մանրամասները:
- Բարձրորակ լուսանկարների հավաքածու (JPEG, 300 dpi), որը ցույց է տալիս՝
  - Հրատարակությունը որպես ֆիզիկական առարկա (առջևը, հետևը, կռնակը, չափը համեմատելու հենանիշ)
  - Առանձին էջեր և երկէջ բացվածքներ՝ ընդհանուր հորինվածքը ներկայացնելու համար
  - Տառային հիմնական տարրերի խոշոր պլանով լուսանկարներ
- Ըստ ցանկության՝ հրատարակության թերթումը ներկայացնող կարճ տեսանյութ (≤2 րոպե, MP4):

Փուլ 2 – Կարճ ցուցակում ընդգրկվելուց հետո – Ֆիզիկական ներկայացում

- Յուրաքանչյուր աշխատանքից մեկ տպագրության պատրաստ օրինակ ուղարկեք նշանակված տարածաշրջանային հասցեով (մանրամասները կտրամադրվեն կարճ ցուցակում ընդգրկվելուց հետո): Դրանք կօգտագործվեն տեղում գնահատման համար, իսկ հետագայում կներառվեն ֆիզիկական ցուցահանդեսում:

2. Պաստառներ (տպագիր և թվային)

Թվային ներկայացում

- Պաստառի ֆայլ՝ JPEG/PNG (300 dpi, վերջնական տպագրական չափով, օրինակ՝ A1/A0 կամ գովազդային վահանակի համամասնությամբ)
- Արտաքին ձևաչափերի համար՝ լրացուցիչ պատկեր, որը ցույց է տալիս պաստառն իր նախատեսված միջավայրում (օրինակ՝ փողոցում տեղադրված 18/1 գովազդային վահանակի վրա)՝ չափն ու ազդեցությունը ներկայացնելու համար:
- Թվային պաստառների համար՝ MP4 ֆայլ (1080p, ≤3 րոպե) կամ գործող ցուցադրության հղում:
- Ըստ ցանկության՝ PDF՝ տպագրության պատրաստ տարբերակների կտրման նշաններով:

3. Փաթեթավորման դիզայն

Փուլ 1 – Թվային ներկայացում

- Լուսանկարների հավաքածու (JPEG, 300 dpi), որը բոլոր անհրաժեշտ դիտանկյուններից ցույց է տալիս փաթեթավորումը որպես 3D առարկա:
- Փռվածք (բացված կտրման գծագիր)՝ բարձր լուծաչափով PDF ձևաչափով՝ տառային դասավորությունն իր համատեքստում ցույց տալու համար:
- Ըստ ցանկության՝ կարճ տեսանյութ (≤2 րոպե), որը ցույց է տալիս փաթեթավորման հետ փոխազդեցությունը, օրինակ՝ ապափաթեթավորումը:

Փուլ 2 – Կարճ ցուցակում ընդգրկվելուց հետո – Ֆիզիկական ներկայացում

- Յուրաքանչյուր աշխատանքից մեկ տպագրության պատրաստ օրինակ ուղարկեք նշանակված տարածաշրջանային հասցեով (մանրամասները կտրամադրվեն կարճ ցուցակում ընդգրկվելուց հետո): Դրանք կօգտագործվեն տեղում գնահատման համար, իսկ հետագայում կներառվեն ֆիզիկական ցուցահանդեսում:

4. Թվային մեդիա և միջերեսի դիզայն

- Փոխազդեցությունն ու նավարկումը ցույց տվող տեսանյութ (MP4, ≤3 րոպե):
- Հիմնական էկրանների պատկերներ (JPEG, 1920×1080 px):

- Գործող կայքի/հավելվածի URL հասցե (հասանելի՝ մինչև գնահատման ավարտը):

5. Շարժապատկերային գրաֆիկա և անիմացիա

- Տեսանյութ՝ MP4/MOV ձևաչափով (1920 × 1080 px, ≤3 րոպե, ≤3 GB)
- Ըստ ցանկության՝ կադրաշարի PDF (մինչև 4 էջ)

6. Միջավայրի և փորձառության դիզայն

- Լուսանկարների շարք (JPEG, 300 dpi)՝ համատեքստը ցույց տվող կադրեր + մանրամասների կադրեր
- Ըստ ցանկության՝ շրջայց ներկայացնող տեսանյութ (MP4, ≤2 րոպե)
- Տարածքի հատակագծեր / դասավորության գծագրեր (PDF, հնարավորության դեպքում՝ վեկտորային)

7. Արշավներ

- Պատկերներ (JPEG) յուրաքանչյուր հիմնական իրագործման համար (տպագիր նյութեր, պաստառներ, թվային գովազդներ)
- Ըստ ցանկության՝ արշավի իրականացումը ներկայացնող տեսանյութ (MP4, ≤3 րոպե)
- Արշավի գործող հարթակների հղում

8. Տեսողական ինքնություն և բրենդավորում

- Լոգոյի տարբերակների հավաքածուն՝ PDF ֆայլերով (վեկտորային), ինչպես նաև կիրառման օրինակներ (JPEG ֆայլեր)
- Բրենդի կիրառության պատկերներ (օրինակ՝ գրասենյակային նյութեր, փաթեթավորում)
- Ըստ ցանկության՝ ուղեցույցի PDF (մինչև 5 էջ)

9. Փորձարարական, չհրատարակված և գեղագրական աշխատանքներ

- Պորտֆոլիո կամ փաստագրում՝ PDF ձևաչափով (մինչև 10 էջ)
- Ըստ ցանկության՝ թվային նախատիպ. ցուցադրական տեսանյութ կամ URL հասցե
- Ցանկացած առնչվող հայեցակարգային նյութեր (էսքիզներ, հետազոտական նշումներ)

Մասնակցության կանոններ և ընդհանուր արժեքներ

GRANSHAN Bloom Award-ը մրցույթից ավելին է. այն վարպետության, հարգանքի և մշակութային երկխոսության ընդհանուր տարածք է: Մեր կանոնները կոչված են այս տարածքը բաց, արդար և ոգեշնչող պահելու բոլորի համար:

Մասնակցությունը հիմնված է երեք պարզ պարտավորությունների վրա՝

- **Մեր ընդհանուր սկզբունքները**
  Մասնակցելով՝ դուք համաձայնում եք GRANSHAN-ի Պարտավորությունների հայտարարությանը: Այն արտացոլում է մեր համոզմունքը, որ դիզայնը փոխըմբռնման և ինքնության ամրապնդման ուժ է, ինչպես նաև ագրեսիային, խտրականությանը կամ ոտնձգություններին հարթակ տրամադրելու մեր մերժումը:
- **Մասնակցության պայմաններ**
  Ներկայացված աշխատանքները պետք է լինեն ինքնուրույն ստեղծված կամ ներկայացվեն հեղինակի կամ հեղինակների լիակատար թույլտվությամբ: Յուրաքանչյուր մրցութային աշխատանք պետք է ներառի լատինականից դուրս առնվազն մեկ գրային համակարգ, որը կրում է տեքստի զգալի մասը (մեկ բառը կամ դեկորատիվ շեշտը բավարար չէ), և համապատասխանի մրցույթի մեդիա կատեգորիաներին: Ողջունվում են հրատարակված, հրատարակման պատրաստվող և չհրատարակված աշխատանքները, այդ թվում՝ հստակ նշված ուսանողական և պրակտիկայի շրջանակում իրականացված նախագծերը:
- **Հեղինակային իրավունք և օգտագործման իրավունքներ**
  Աշխատանքը ներկայացնելով՝ դուք հաստատում եք, որ ունեք ձեր աշխատանքի նկատմամբ անհրաժեշտ իրավունքները: Դուք GRANSHAN-ին և նրա գործընկերներին տրամադրում եք ոչ բացառիկ լիցենզիա՝ ձեր աշխատանքը ցուցահանդեսներում, հրատարակություններում և մրցանակին առնչվող մեդիայում ներկայացնելու համար՝ միշտ պատշաճ կերպով նշելով հեղինակներին: Եթե ձեր աշխատանքը պարունակում է երրորդ կողմերի նյութեր, դրանց օգտագործման իրավունքները ձեռք բերելու պատասխանատվությունը ձերն է: Գաղտնի կամ հրապարակման արգելքի տակ գտնվող նախագծերի հետ կվարվենք անհրաժեշտ զգուշությամբ:

Այս պարտավորությունները պահպանում են արդարությունն ու ազնվությունը՝ որպես GRANSHAN Bloom Award-ի հիմք, որպեսզի գրերի և դիզայնի տոնակատարությունը մնա նույնքան բաց, ներառական և կենսունակ, որքան այն համայնքները, որոնց ծառայում է:

GRANSHAN-ի Պարտավորությունների հայտարարություն
Որպես համաշխարհային տեսողական ինքնության կենտրոն՝ GRANSHAN-ը արժևորում է տառատեսակներն ու տառային ձևավորումը, դիզայնը և հաղորդակցությունը: Այդպիսով GRANSHAN-ն աջակցում է համայնքների, մշակույթի և բիզնեսների զարգացմանը՝ տեղական, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակների միջև հավասարակշռությամբ:

GRANSHAN-ը միջազգային փոխըմբռնման նախագիծ է. բարձրորակ տառատեսակներով և գերազանց տառային ձևավորմամբ կառուցված հաղորդակցությունը հնարավոր է դարձնում շփումը և ամրապնդում ինքնությունը: Մեր մոտեցումը երբեք բացառող չէ. այն լայն է և ներառական:

Միաժամանակ մենք գիտակցում ենք աշխարհում առկա բախումների բազմազանությունն ու ամենատարբեր անարդարությունները. որպես համաշխարհային գործունեություն ծավալող նախագիծ՝ պարբերաբար առնչվում ենք դրանց: Մենք գիտակցում ենք իրավիճակները դրսից գնահատելու դժվարությունն ու վտանգները: GRANSHAN հիմնադրամի հիմնադիրների և աջակիցների թվում շատերն այս հարցերի վերաբերյալ ունեն հստակ համոզմունքներ: Մենք հարգում ենք դրանք և, քանի դեռ այդ հարգանքն ու բաց լինելը փոխադարձ են, սիրով հաղորդակցվում ենք կարծիքների այս բազմազանության հետ և ընդունում փոխըմբռնման հասնելու մարտահրավերը:

Մեր գործունեության բոլոր ոլորտներում մեր կարմիր գծերը հստակ են. մենք չենք կարող հարթակ տրամադրել որևէ մեկին, ով հանդես է գալիս հօգուտ ագրեսիվ պատերազմի որևէ ձևի, ահաբեկչության կամ ցանկացած տեսակի խտրականության և ոտնձգությունների: Մենք հանդես ենք գալիս միջազգային իրավունքի, փոխըմբռնման և համագործակցության վրա հիմնված աշխարհակարգի օգտին:

Մասնակցության պայմանների և հեղինակային իրավունքի հայտարարություն

1. Մասնակցության պայմաններ

1.1 Ներկայացված աշխատանքները պետք է լինեն մասնակցի ինքնուրույն ստեղծած աշխատանքները կամ ներկայացվեն սկզբնական հեղինակի կամ հեղինակների հստակ արտահայտված թույլտվությամբ:

1.2 Մասնակցության պայմաններին համապատասխանող մրցութային աշխատանքները պետք է ներառեն լատինականից դուրս առնվազն մեկ գրային համակարգ և պատկանեն մրցույթի սահմանված մեդիա կատեգորիաներին:

1.3 Աշխատանքներն ընդունվում են հետևյալ ձևերով՝

- Հրատարակված աշխատանք (առևտրային շրջանառության մեջ դրված կամ պատվերով ստեղծված)
- Հրատարակման պատրաստվող աշխատանք (դեռ չհրապարակված, սակայն հրապարակման համար նախատեսված)
- Չհրատարակված աշխատանք (հայեցակարգային, հետազոտության վրա հիմնված կամ հնարավորություններն ուսումնասիրող)

1.4 Ուսանողական և պրակտիկայի շրջանակում իրականացված նախագծերը կարող են մասնակցել և ներկայացման պահին պետք է հստակ նշված լինեն որպես այդպիսին:

2. Հեղինակային իրավունք և օգտագործման իրավունքներ

2.1 Ներկայացված աշխատանքների նկատմամբ հեղինակային բոլոր իրավունքները մնում են մասնակցին: Մասնակցությամբ մասնակիցները GRANSHAN-ին և նրա գործընկերներին տրամադրում են միայն ստորև նկարագրված օգտագործման կոնկրետ, սահմանափակ իրավունքները՝ բացառապես GRANSHAN Bloom Award-ին առնչվող նպատակներով:

2.2 Մրցութային աշխատանք ներկայացնելով՝ մասնակիցը հաստատում է, որ ներկայացված աշխատանքի հեղինակային իրավունքի օրինական իրավատերն է կամ լիակատար գրավոր թույլտվություն է ստացել հեղինակային իրավունքի օրինական իրավատիրոջից կամ իրավատերերից:

2.3 Մասնակիցը GRANSHAN-ին և նրա պաշտոնական գործընկերներին տրամադրում է ոչ բացառիկ, ամբողջ աշխարհում գործող, առանց հոնորարի լիցենզիա՝

- Վերարտադրելու, ցուցադրելու և տարածելու աշխատանքը GRANSHAN Bloom Award-ին առնչվող ոչ առևտրային նպատակներով՝ ներառյալ ցուցահանդեսները, տպագիր և թվային հրատարակությունները, փաստագրումը և մրցանակին առնչվող գովազդային նյութերը:
- Արխիվացնելու և ներկայացնելու աշխատանքը GRANSHAN-ի հետագա հրատարակություններում, հետազոտություններում կամ հետահայաց անդրադարձներում՝ պատշաճ կերպով նշելով հեղինակներին:

3. Երրորդ կողմերի նյութերի օգտագործում

3.1 Եթե ներկայացված աշխատանքը ներառում է երրորդ կողմերին պատկանող տարրեր, օրինակ՝ տառատեսակներ, պատկերներ կամ մտավոր սեփականություն, օգտագործման բոլոր անհրաժեշտ իրավունքները ձեռք բերելու պատասխանատվությունը կրում է բացառապես մասնակիցը:

3.2 GRANSHAN Bloom Award-ի կազմակերպիչները պատասխանատվություն չեն կրում երրորդ կողմերի չարտոնված նյութեր պարունակող ներկայացված աշխատանքներից բխող հեղինակային իրավունքի խախտումների կամ դրանց առնչվող որևէ իրավական պահանջի համար:

4. Գաղտնի կամ դեռ չհրապարակված աշխատանքներ

4.1 Մասնակիցները կարող են նշել, որ ներկայացված աշխատանքը պարունակում է գաղտնի կամ դեռ չհրապարակված նյութեր: Նման մրցութային աշխատանքների հետ կվարվեն անհրաժեշտ զգուշությամբ, և դրանք չեն ցուցադրվի հանրությանը՝ մինչև հրապարակման գրավոր թույլտվություն ստանալը կամ համաձայնեցված հրապարակման ամսաթիվը:

4.2 Մասնակիցները կարող են նաև խնդրել սահմանել հրապարակման արգելք կամ ցուցադրման պայմանական սահմանափակումներ, որոնք կպահպանվեն հնարավորության սահմաններում:

5. Համաձայնության հայտարարություն

Բոլոր մասնակիցները աշխատանքը ներկայացնելիս պետք է համաձայնեն հետևյալ հայտարարությանը. «Սույնով հայտարարում եմ, որ ներկայացված աշխատանքն ինքնուրույն ստեղծված է, որ ես հեղինակային իրավունքի իրավատերն եմ կամ ձեռք եմ բերել այս աշխատանքը ներկայացնելու համար անհրաժեշտ բոլոր իրավունքները և որ ընդունում ու պահպանում եմ GRANSHAN Bloom Award-ի մասնակցության պայմաններն ու հեղինակային իրավունքի դրույթները»:

Սիրելի գրեր, սիրելի աշխարհներ

Այս ուղին՝ անհատական մասնագիտական գիտելիքից մինչև հավաքական ճանաչում, իր գագաթնակետին է հասնում ոչ միայն մրցանակներում, այլև մշակույթների միջև ընդհանուր տեսանելիության, երկխոսության և փոխադարձ արձագանքի մեջ:

Սա տոնակատարություն է, որն ապրում է թվայինից և անցողիկից անդին՝ արմատացած շոշափելի ձևի, հանրային տարածքի և մարդկանց ու իրենց գրային համակարգերի միջև մշակութային խոր կապերի մեջ:

Աշխարհի շատ վայրերում՝ Հայաստանից մինչև Կորեա, Թաիլանդից մինչև Հնդկական ենթամայրցամաք, գրային համակարգերը պարզապես հաղորդակցության գործիքներ չեն, այլ ինքնության, պատկանելության և շարունակականության հզոր խորհրդանիշներ:

GRANSHAN-ի ուղին արժևորում է այս կապը՝ գրելու իրավունքը, տեսանելի լինելու իրավունքը, ընթերցվելու իրավունքը:

Այս ոգով՝ չսահմանափակվելով մեկ ուղղությամբ, այլ տարածվելով գրային համակարգերի և տարածաշրջանների միջև, մենք տոնում ենք համաշխարհային դիզայնի հարստությունը:

GRANSHAN Bloom Award-ի թիմ

GRANSHAN

https://granshan.com/hy/awards/bloom/guidelines · 2026 թ. նոյեմբերի 19